



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


6 սեպտեմբերի 2017 թվականի թիվ 167-Ա

«ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ Վ.ՍԱՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՉԻՆԱՐԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին» N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 1)-ին ենթակետով՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. 2017 թվականի սեպտեմբերի 6-ից լուծել «ՀՀ Տավուշի մարզի Վ.Սաղոյանի անվան Չինարիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գրետա Գարեգինի Դալլաքյանի հետ 2012 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. Մինչև մրցույթով տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելը 2017 թվականի սեպտեմբերի 6-ից Գրետա Գարեգինի Դալլաքյանին նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Վ.Սաղոյանի անվան Չինարիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար և կնքել աշխատանքային պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

2017թ. սեպտեմբերի 6
ք. Իջևան